Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՎՐԱՑ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ ԻԼԻԱ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍ-ՊԱՏՐԻԱՐՔԻ ՏՎԱԾ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԹՐԻՔԻ ԱՌԻԹՈՎ

(Թբիլիսի, 12 հունիսի, 2011 թ.)

«Եղբայրսիրությունը թող հաստատ մնա ձեր մեջ»:

(Եբր. ԺԳ 1-2)

Սիրեցյալ եղբայր ի Քրիստոս,

Մեծարգո Նախագահ Վրաստանի Հանրապետության,

Հոգեւոր եղբայրներ եւ քույրեր.

Սուրբ առաքյալի այս խոսքով ենք ողջունում Ձեզ այսօր, երբ առիթն ունենք ընդունելու հյուրընկալությունը Վրաց Ուղղափառ Եկեղեցու շնորհազարդ Պատրիարքի եւ հանդիպելու Վրաստանի բարձրապատիվ Նախագահին եւ հավատավոր զավակներին Վրաց Եկեղեցու, ինչպես եւ՝ Վրաստանում պաշտոնավարող դիվանագիտական առաքելությունների ներկայացուցիչներին:

Մեր այցը արտահայտում է մեր ժողովուրդների հազարամյակների բարեկամական հարաբերությունները, որոնք սկիզբ առնելով մեր նախահայրեր Հայկի ու Քարթլոսի հնագույն ժամանակներից, ամրապնդվել են պատմության ընթացքում, զորացել քրիստոնեական եղբայրությամբ եւ հիշատակներով: Բազմիցս մեր ժողովուրդները նույն վտանգին են ենթարկվել, նույն դժվարությունները հաղթահարել, միասին ստեղծել են ու աղոթել, միասնաբար կիսել վիշտ եւ ուրախություն, զորակից միմյանց՝ շենացրել են իրենց հայրենիքները եւ միասին մարտնչել են թշնամյաց դեմ:

Մեր ժողովուրդների բարեկամության համար բոլոր ժամանակներում ամուր երաշխիք է հանդիսացել Վրաստանի հայ համայնքը՝ հայոց սփյուռքի հնագույն եւ ավանդաշատ համայնքներից մեկը: Մեր ժողովուրդների հարաբերությունների ամենաջերմ եւ փառավոր էջերն են արձանագրված հարուստ պատմության մեջ Վրաստանի հայ համայնքի, որը եղել ու մնում է նաեւ այն հիմնամուր կամուրջը, որ թեւեր է պարգեւում հայ-վրացական բարեկամությանն ու համագործակցությանը: Գտնելով բարյացակամություն վրաց բարեպաշտ թագավորների, իշխանների ու ժողովրդի կողմից՝ հայությունը մեծ ավանդ է բերել Վրաստանի պետական, տնտեսական, հասարակական ու մշակութային կյանքին, միաժամանակ հարազատ մնալով իր ինքնությանը, պահպանելով ու զարգացնելով իր հոգեւոր եւ ազգային կյանքը: Թբիլիսին, ուր ծաղկել է մեր ժողովուրդների համագործակցությունը արվեստի, գիտության ու կրթության ասպարեզներում, միշտ հարազատ է լինելու հայության սրտին: Վրաց մայրաքաղաքում, որ ունեցել է նաեւ հայ քաղաքագլուխներ, արծարծվել ու զորացել են նաեւ անկախ պետականության, հասարակական բարեփոխումների հույսերը մեր ժողովուրդների: Այսօր էլ Վրաստանի հայ զավակները, հավատարիմ իրենց նախնյաց մեծ վաստակին, որպես օրինապահ, արժանավոր քաղաքացիներ, նախանձախնդիր նվիրումով, պատասխանատվության եւ իրավունքի բարձր գիտակցությամբ վրաց ժողովրդի կողքին իրենց կարեւոր ներդրումն են բերում Վրաստանի կյանքի բարօրությանն

ու առաջընթացին: Արդարև, թանկ են մեր բազմադարյա բարեկամության հիշատակները, որոնք պիտի օգնեն մեր ժողովուրդներին միմյանց զորակից լինելով կառուցելու լուսավոր ու երջանիկ իրենց ապագան՝ ինչպես վայել է եղբայրներին, որ տուն են կառուցում կողք կողքի եւ ինչպես վայել է Քրիստոսի Սուրբ Եկեղեցու զավակներին, որ նույն շնորհն ու հույսն ունեն Աստծուց:

Վերահաստատած իրենց անկախ պետականությունը՝ մեր ժողովուրդներն այսօր նույնպիսի հոգսեր ու խնդիրներ ունեն, նույնպիսի բարի նպատակներ՝ բարօր ու բարգաված դարձնելու իրենց հայրենիքները, ամրապնդելու ազատ, արդար հասարակարգի հիմքերը, զարգացնելու իրենց մշակույթը, զորացնելու հավատքն ու պայծառացնելու իրենց հոգեւոր կյանքը: Մեր երկրներն ու ժողովուրդները կանգնած են նաեւ մեր ժամանակների մարտահրավերների, համընդհանուր եւ տարածաշրջանային կարեւորության խնդիրների առջեւ: Մենք ուրախ ենք, որ շարունակելով բարեկամության ավանդույթները, եղբայրական սիրով ու բարի կամքով մեր երկրների իշխանությունները համագործակցաբար հաղթահարում են դժվարությունները եւ միատեղ ջանքերով լուծումներ գտնում առկա մարտահրավերներին: Հավատում ենք, որ ժողովրդավարության ուղիով ընթացող Վրաստանում կարգավորում պիտի գտնեն նաեւ վիրահայ համայնքին եւ համայն մեր ժողովրդին հուզող եկեղեցական խնդիրները: Վիրահայոց թեմի իրավական կարգավիճակի եւ հայկական եկեղեցիների վերադարձման հարցերի լուծումը նպաստելու է հայ համայնքի հոգեւոր կյանքի զորացմանը եւ մեր եկեղեցիների մեկ եւ նույն առաքելության արդասավորմանը: Մաղթում ենք, որ մեր այս հանդիպումը նոր վկայություն դառնա մեր եկեղեցիների ու ժողովուրդների եղբայրության եւ նոր բարի արդյունքներ բերի մեր եկեղեցիների ու մեր երկրների կյանքում, քանզի Աստված սուրբ առաքյալի բերանով պատգամում է. «Եղբայրսիրությունը թող հաստատ մնա ձեր մեջ»:

Ձերդ Սրբություն, մեծարգո Նախագահ, շնորհակալություն ենք հայտնում Ձեզ Մեր հանդեպ ցուցաբերած ազնիվ վերաբերմունքի եւ ջերմ հյուրընկալության համար: Տիրոջ օրհնությունն ու շնորհներն ենք հայցում՝ Ձեզ պարգեւելու քաջառողջ կյանքի երկար տարիներ եւ մնայուն նոր իրագործումներ ի սեր Վրաստանի եւ նրա աստվածասեր ժողովրդի: Աղոթում ենք, որ Աստված օրհնի եւ բարի արդյունքներով արգասավորի նվիրումն ու ստեղծագործական ջանքերը վրաց մտավորականության: Մաղթում ենք նոր ձեռքբերումներ Վրաստանում գործող դիվանագիտական առաքելություններին՝ հանուն պետությունների ու ժողովուրդների բարեկամության ու համագործակցության զորացման:

Աղոթում ենք, որ Տերը խաղաղ պահի մեր երկրները, աներեր՝ սերն ու բարեկամությունը մեր ժողովուրդների սրտերում՝ ի փառս Իր Սուրբ Անվան, ի պայծառություն մեր եկեղեցիների եւ ի բարօրություն մեր ժողովուրդների: